600.0175.22.06.16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2016 թվականի №175Ա
քաղ. Երևան

## ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԻ ՇԱՐՔ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N64Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Հաշվարկային կենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ընկերությունները աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո (անհրաժեշտության դեպքում՝ տարեկան հաշվետվությունները բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո), 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական

հաշվետվությունների պատճենները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ինչպես նաև աուդիտորական եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունները հրապարակում իրենց և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքերում:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի մայիսի 27-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի մի շարք լիցենզավորված անձանց ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացման մասին» N64Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 հունիսի 2016թ.
ժամը 16⁰⁰